

ՄԱՐԻՆԵ
ՄԱՐՈՒԹՅԱՆ

**ԹՈՒՅԼ ՏԵՍՆՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ
ՏԵՍՈՂԱԿԱՆ ԸՆԿԱԼՄԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ
ՀԱՏՈՒԿ ԽԱՂԵՐ, ԽԱՂԱՅԻՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

*Ուսումնամեթոդական
չեռնարկ*

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՐԻՆԵ

**ԹՈՒՅԼ ՏԵՍՆՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ
ՏԵՍՈՂԱԿԱՆ ԸՆԿԱԼՄԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ
ՀԱՏՈՒԿ ԽԱՂԵՐ, ԽԱՂԱՅԻՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Ուսուցման եթոդակաճ ձեռնարկ



ԵՐԵՎԱՆ • 2012

Երաշխավորված է Խ. Արովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի կողմից

ՀՏԴ 376.3 (07)
ԳՄԴ 74.3 97
Մ 399

Գրախոս **Ազարյան Ռ. Ն.**, մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Մարտի 4

Մ 399 Թույլ տեսնող երեխաների տեսողական ընկալման զարգացման հատուկ խաղեր, խաղային վարժություններ և հանձնարարություններ: Ուսումնամեթոդական ձեռնարկ / Մ. Մարտի 4.— Եր.: Չանգակ-97, 2012, 40 էջ:

Ուսումնամեթոդական ձեռնարկը նախատեսված է հանրակրթական, ներառական և տեսողության խանգարումներով երեխաների հատուկ դպրոցի ուսուցիչներին, դաստիարակներին, ծնողներին: Այս մեթոդական ձեռնարկից կարող են օգտվել նաև մանկավարժական բուհերի նախադպրոցական, սկզբնական և հատուկ կրթության ֆակուլտետի ուսանողները:

Ուսումնամեթոդական ձեռնարկում ներկայացված տեսական և գործնական նյութը կնպաստի ինչպես տեսողության խանգարումով երեխաների, այնպես էլ նորմալ տեսողության տեսողական ընկալման զարգացմանը, տիֆլոմանկավարժության բաժնի ուսանողների տեսական գիտելիքների, գործնական կարողությունների և հմտությունների զարգացմանը:

ՀՏԴ 376.3 (07)
ԳՄԴ 74.3 97

ISBN 978-99941-1-977-6

© Մարտի 4 Մ. 4., 2012
© «Չանգակ-97», 2012

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տարեցտարի ինչպես Հայաստանում, այնպես էլ ամբողջ աշխարհում աճում է տեսողության խանգարումներով անձանց թիվը: Առաջնային խանգարումը առաջ է բերում է մի շարք երկրորդային խանգարումներ տեսողական ընկալման, տարածական կողմնորոշման և այլն, որոնք դժվարացնում են խաղային, ուսումնական, աշխատանքային գործընթացի իրականացումը, տուժում է ճանաչողական ոլորտը: Տեսողական ընկալման խանգարումները անդրադառնում են առարկաների, երևույթների ճիշտ, բազմակողմանի ընկալմանը, ինչն էլ դժվարացնում է նրանց ինքնասպասարկման հմտությունների յուրացման, մասնագիտական կողմնորոշման, տարածական պատկերացումների յուրացման գործընթացը և այլն (Մ. Ի. Չենցովա, 1956, Ռ. Ն. Ազարյան, 1994, Լ. Ի. Պլակսինա, 1986, Բ. Կ. Տուպոնոզով, 2001, 2004, Մ. Կ. Մարտի 4, 2005 և ուրիշներ):

Թույլ տեսնող երեխաների զարգացման կարևոր հիմնախնդիրներից մեկը տեսողական ընկալման ձևավորումն է: Տիֆլոմանկավարժության և տիֆլոհոգեբանության բնագավառում գրեթե բացակայում են թույլ տեսող երեխաների տեսողական ընկալման խանգարման առանձնահատկություններն ու դրանց շտկման ուղիներն ուսումնասիրող հիմնահարկություններն ու դրանց շտկման ուղիներն ուսումնասիրող հիմնահարկությունները: Այդ աշխատանքները գործնականում անցկացվում էին հիմնականում ուսումնական նյութի հիման վրա, իսկ հատուկ խաղեր, խաղային նյութեր, գրեթե չի կիրառվում: Սակայն հայտնի է, որ տեսողության խանգարումներով երեխաների տեսողական ընկալման զարգացումը ավելի դյուրին է խաղային գործունեության ընթացքում:

Հիմնախնդրի արդիականությունը որոշվում է նաև նրանով, որ գործնականում ինչպես ընտանիքում, այնպես էլ դպրոցում տեսողական ընկալման ձևավորման և զարգացման ուղղությամբ անհրաժեշտ աշխատանքներ չեն տարվում: Ծնողների, դաստիարակների, ուսուցիչների ոչ լիարժեք իրազեկությունը, մեթոդական ձեռնարկների բացակայությունը: Այդ նույնպես դժվարացնում են այս աշխատանքների իրականացումը: Այդ նույնպես թույլ տեսնող երեխաների տեսողական ընկալման զարգացումով թույլ տեսնող երեխաների, առաջադրանքների մշակումը ուսումնական մեծ նշանակություն:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ տվյալ ուսումնամեթոդական ձեռնարկում ներկայացված են թույլ տեսնող երեխաների տեսողական ընկալման զարգացման հատուկ մեթոդներ, խաղեր, խաղային վարժություններ և հանձնարարություններ:

Տվյալ աշխատանքը բաղկացած է հետևյալ բաժիններից.

- Թույլ տեսնող կրտսեր դպրոցականների տեսողական ընկալման զարգացման օրինակելի ծրագիր, որում ներկայացված է տեսողական ընկալման զարգացման ուսումնական նյութ ըստ փուլերի դասարանների և առարկաների: Յուրաքանչյուր փուլի վերջում ներկայացված են նաև այդ նյութերի կիրառման մեթոդական ցուցումներ, ստուգողական հարցեր, որոնք կօգնեն ուսուցիչներին, դաստիարակներին ինքնուրույն անցկացնել տեսողական ընկալման զարգացման պարապմունքները, ընտրել անհրաժեշտ նյութը:

- Թույլ տեսնող երեխաների տեսողական ընկալման զարգացման մակարդակի որոշման օրինակելի թեստեր, որոնք կարող են կիրառել մասնագետները և ծնողները:

- Տեսողության խանգարումով երեխաների տեսողական ընկալման զարգացման օրինակելի խաղեր, խաղային վարժություններ և հանձնարարություններ:

Տվյալ ուսումնամեթոդական ձեռնարկը նախատեսված է ինչպես ուսուցիչների, դաստիարակների, այնպես էլ ծնողների համար: Աշխատանքից կարող են օգտվել նաև մանկավարժական բուհերի ուսանողները:

ԹՈՒՅՆ ՏԵՍՆՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՏԵՍՈՂԱԿԱՆ ԸՆԿԱԿՄԱՆ ԳՈՐԾԱՆՆԵՐԻ ԵՎ ԽՈՒՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԱՍՏՈՒՄ ՏԵՐԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեսողության խանգարումով երեխաներին առնչվող (ինչպես նախադպրոցական, այնպես էլ դպրոցական տարիքում) ուսուցման և դաստիարակման մի շարք հարցեր եղել են տիֆլոմանկավարժների և տիֆլոհոգեբանների ուշադրության կենտրոնում:

Տեսողության խանգարումով դպրոցահասակ տարիքի երեխաների ուսուցման և դաստիարակության հարցերն իրենց աշխատանքներում ուսումնասիրել են Տ. Պ. Գոլովինան (1958), Լ. Պ. Գրիգորևան (1990), Ս. Ի. Չեմցովան (1960), Ի. Ս. Սորգուլիսը (1984) և ուրիշներ:

Ֆիզիկական դաստիարակության հիմնախնդիրը տիֆլոմանկավարժությունում իր ուրույն տեղն է գրավում: Այն լայնորեն ուսումնասիրվել է Բ. Վ. Սերմենի (1976), Ռ. Ն. Ազարյանի (1987, 2008), Ա. Ռ. Ազարյան (2004) և ուրիշների կողմից:

Կույր և թույլ տեսնող երեխաների ուսուցման և դաստիարակության հարցերին անդրադարձել են նաև հայ տիֆլոմանկավարժները (Ռ. Ն. Ազարյան, Բ. Յ. Գալստյան, Ա. Ռ. Մկրտչյան, Գ. Ռ. Սահակյան, Ս. Վ. Մուրադյան, Ս. Կ. Մարության և ուրիշներ): Նրանց աշխատանքներում լուսաբանված են այնպիսի հարցեր, ինչպիսիք են տեսողության խանգարումով երեխաների երկրաչափական պատկերացումների ձևավորումը, նրանց գրավոր խոսքի, քայլելու առանձնահատկությունները և այլն: Սակայն վերը նշված բոլոր աշխատանքները չէին վերաբերում թույլ տեսնող երեխաների տեսողական ընկալման զարգացման հարցերին, թեև դրանք մասնակիորեն ուսումնասիրվել են Լ. Պ. Գրիգորևայի, Լ. Ի. Սուլցևայի, Լ. Ի. Պլակսինայի, Ս. Ի. Չեմցովայի և ուրիշների աշխատանքներում:

Այժր ընկալման արագությամբ և լիարժեքությամբ գերազանցում է մարդու մյուս զգայական օրգաններին: Տեսողական տեղեկատվությունը կազմում է ամբողջ տեղեկության մոտավորապես 80%—ը: Ի. Ս. Սեչենովը (1952) գրել է, որ օրվա ընթացքում հաշվելով այն տասներկու ժամով և դնելով յուրաքանչյուր նոր տեսողական զգայության համար միջին քվով հինգ վայրկյան, աչքի միջով անցնում է ութ հարյուր զգայություններից ավելին: Տեսողության միջոցով իրականանում է շրջակա առարկաների, երևույթների, հատկությունների և հատկանիշների մասին տեղեկատվության ընկալում: Բնականաբար, տեսողության խանգարումները որո-

աշխատանքներում: Արդյո՞ք տեսողական ճանաչումը բաղկացած է մի շարք հաջորդական փուլերից:

Ելնելով վերոգրյալից մենք գտնում ենք, որ տեսողությունը հնարավորություն կտա առավել մանրամասն և խորն ուսումնասիրել տեսողական պատկերների կայացման գործընթացը և բացահայտել տեսողական ընկալման յուրահատուկ առանձնահատկություններ:

Եվ այսպես, գիտամեթոդական գրականության ուսումնասիրությունը և վերլուծությունը վկայում են, որ թույլ տեսնող երեխաների տեսողական ընկալման զարգացման հարցերին նվիրված են մի շարք աշխատություններ: Հեղինակները կարևոր տեղ են հատկացնում տեսողական ընկալման զարգացման առանձնահատկությունների ուսումնասիրմանը և հատուկ միջոցների ու մեթոդների մշակմանը, սակայն դրանք առավել շատ ներկայացված են տեսականորեն: Գործնականում այն դեռևս լայնորեն չի ուսումնասիրվել:

Այս ամենը հաշվի առնելով մենք ներկայացնում ենք գործնականում կիրառվող մի շարք նյութեր, որոնք ողղված են տեսողական ընկալման զարգացմանը:

1-4-րդ դասարանների թուֆլ ՏԵՍՆՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՏԵՍՈՂԱԿԱՆ ԸՆԿԱԼՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԾՐԱԳԻՐ

Առաջարկվող հետևյալ ծրագիրն ուղղված է թույլ տեսնող երեխաների տեսողական ընկալման զարգացմանը: Ծրագրի խնդիրն է տեսողության խանգարումով երեխաների մեջ ձևավորել առարկաների և պատկերների հիմնական հատկությունների, մեծությունների մասին պատկերացումներ, գործնականորեն ծանոթացնել միմյանց հանդեպ դրանց կախվածությանը, սովորեցնել երկրաչափական պատկերները, մշակել որոշ անհրաժեշտ տարրական գրաֆիկական հմտություններ և այլն:

Ծրագիրն ունի հետևյալ կառուցվածքը

- Բացատրական թերթիկ.
- Տեսողական ընկալման զարգացման օրինակելի ուսումնական նյութ.
- Մեթոդական ցուցումներ այդ նյութի կիրառման վերաբերյալ.
- Հիմնական պահանջներ այն մասին, թե ինչ պետք է իմանա և կարողանա երեխան յուրաքանչյուր փուլի վերջում:

Բացատրական թերթիկ

Բացատրական թերթիկում ներկայացված են ծրագրի կառուցվածքը, կիրառման ձևերը, մեթոդները և այլն: Ուսումնական նյութը տարանջատված է ըստ դասարանների, առարկաների («Մաթեմատիկա», «Ծանոթություն շրջակա միջավայրին», «Կերպարվեստ», «Տեխնոլոգիա»): Յուրաքանչյուր ուսուցիչ և դաստիարակ, կիրառելով մեր կողմից առաջարկված օրինակելի ծրագիրը, կկարողանա ինքնուրույն անցկացնել տեսողական ընկալման զարգացման շտկողական պարապմունքները, ընտրել նյութը, այն բաժանել ըստ տարիքի, անհատական առանձնահատկությունների և այլն: Ծրագիրը կարող է կիրառվել ուսումնական առարկայական դասերին, առանձին շտկողական պարապմունքներին և դասապատրաստման ընթացքում ազատ ժամանակ և այլն:

Տեսողական ընկալման զարգացման օրինակելի ուսումնական նյութը մենք պայմանականորեն բաժանել ենք երեք փուլի.

**Տեսողական ընկալման զարգացումը
«Մաթեմատիկայի» դասերին**

| Բովանդակություն | Մեթոդական ցուցումներ |
|--|--|
| Սովորեցնել տարբերակել առարկաների տեղադրությունը հարթության վրա (աջ, ձախ, մեջտեղում, վրա, տակ, միջև): | Ուսուցանելիս ցանկալի է կիրառել ակնառու մեթոդական նյութեր լուցկիներ, խորանարդներ և այլն: |
| Համեմատել առարկաներն ըստ մեկ հատկության(մեծ, փոքր): Համեմատել առարկաներն ըստ մի քանի հատկությունների (երկար, կարճ, լայն, նեղ, բարձր, ցածր, հաստ, բարակ): Տարբերակել հեռու և մոտ գտնվող առարկաները: | Հատկությունները ուսուցանելիս ցանկալի է սկզբում կիրառել միմյանցից մեկ հատկությամբ կտրուկ տարբերվող առարկաներ, նկարներ: |
| Ձևավորել վերև, ներքև հասկացությունները: | Փոքր խորանարդներով կառուցել աշտարակ ցույց տալով վերևը, ներքևը: |
| Համեմատել առարկաների խմբերը (շատ, քիչ): | Սկզբում վերցնել քանակով շատ, տեսանելի տարբերություն ունեցող խմբեր, աստիճանաբար առարկաների քանակը կարելի է մոտեցնել միմյանց: |
| Ուսուցանել երկրաչափական պատկերների ճանաչումը և անվանումը (եռանկյուն, շրջան, ուղղանկյուն): | Երկրաչափական պատկերների ուսուցումը սկզբում կազմակերպել պասիվ ձևով, այնուհետև այն ամրապնդել ակնառու ուսումնական նյութով կիրառելով գունավոր թղթերից պատրաստված, փայտե առարկաներ, կատարել վարժություններ փայտե երկրաչափական մարմինների միջոցով: |
| Սովորեցնել կետ, ուղիղ գիծ հասկացությունները: Սովորեցնել քանոնի օգտագործումը: Ստանալ ուղիղ թուղթը ծալելով: Քանոնի օգնությամբ գծել ուղիղ գիծ: Գծել ուղղահայաց և հորիզոնական գծեր: | |

- Տեսողական ընկալման զարգացման օրինակելի ուսումնական նյութ, I փուլ(առաջին դասարանի համար)
- Տեսողական ընկալման զարգացման օրինակելի ուսումնական նյութ, II փուլ (երկրորդ դասարանի համար)
- Տեսողական ընկալման զարգացման օրինակելի ուսումնական նյութ, III փուլ (երրորդ-չորրորդ դասարանների համար):

Ծրագրում ներկայացված են նաև այդ նյութերի կիրառման մեթոդական ցուցումները և հիմնական պահանջներն այն մասին, թե երեխան ինչպես է իմանա ու կարողանա յուրաքանչյուր փուլի վերջում (այսինքն ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները): Ծրագիրն ուղղված է ինչպես տեսողության խանգարումով երեխաների, այնպես էլ ներառական, հանրակրթական դպրոցի ուսուցիչների և դաստիարակների համար: Դրանից կարող են օգտվել նաև նախադպրոցական, սկզբնական և հատուկ կրթության ֆակուլտետի տիֆլոմանկավարժության բաժնի ուսանողները:

Ներկայացնում ենք տեսողական ընկալման զարգացման հիմնական ուսումնական նյութը:

**Տեսողական ընկալման զարգացման
օրինակելի ուսումնական նյութ**

I փուլ

Օրինակելի ուսումնական նյութը այս բաժնում առանձնացրել ենք ըստ հետևյալ առարկաների «Մաթեմատիկա», «Ծանոթություն շրջակա միջավայրին», «Կերպարվեստ», «Տեխնոլոգիա»:

**Տեսողական ընկալման զարգացումը
«Ծանոթացում շրջակա միջավայրին» դասերին**

| Բովանդակություն | Մեթոդական ցուցումներ |
|---|--|
| Սովորեցնել տեսողությամբ առանձնացնել կենցաղային օգտագործման իրերի պատկերները, տալ դրանց անվանումները և նշել գործառույթները: Ձևավորել շրջակա միջավայրի մասին տեսողական պատկերներ «Կենդանիներ ընտանի, վայրի», «Ծառեր», «Թփեր», «Խոտեր», «Ձկներ», «Թռչուններ», «Ընտանիք») թեմաներից: | Ուսուցանելիս սկզբում ցանկալի է կիրառել իրական առարկաներ, այնուհետև զուգահեռաբար ցույց տալ դրանց նկարները, որոնք կլինեն մեծ և գունեղ: |
| Ծանոթանալ դասարանին, դպրոցին և դրա բակին (անցկացնել էքսկուրսիա դպրոցով): | Սկզբում երեխային ծանոթացնել իր դասարանին, սեղանների տեղադրությանը, այնուհետև՝ ամբողջ դպրոցի տարածքին, բակին: |
| Անցկացնել զբոսանքներ բնության գրկում, ծանոթացնել տարվա եղանակներին և դրանց բնորոշ առանձնահատկություններին: Ձևավորել տարրական պատկերացումներ շրջակա միջավայրի տարբեր երևույթների մասին լույս, ծայն, մագնիս, էլեկտրականություն և այլն: | էքսկուրսիաների ընթացքում բառացի բացատրությունը անպայման զուգակցել տվյալ երևույթի դիտմամբ և ուսուցմամբ: |

**Տեսողական ընկալման զարգացումը
«Կերպարվեստի» դասերին**

| Բովանդակություն | Մեթոդական ցուցումներ |
|---|---|
| Սովորեցնել նայել, դիտել, բնութագրել պատկերները ըստ տարբեր հատկանիշների: | Պատկերը դիտելիս սկզբում երեխայի ուշադրությունը դարձնել առաջնային հատկությանը, այնուհետև բնութագրել դրանք: |
| Սովորեցնել հետազոտել առարկաները և համեմատել դրանք ըստ ձևի, չափի, տեղադրության: | Սկզբում հետազոտել առանձին առարկայական նկարներ: |
| Սովորեցնել նայել, «կարդալ», պարզ նատյուրմորտները (օրինակ խնձոր և տանձ տարբեր տեղադրությամբ): Սովորեցնել ճիշտ օգտվել մատիտից օգտագործել տեսողությունը: | Ուսուցանելիս կիրառել ոչ միայն նկարներ, այլև իրական առարկաներ: |
| Գծել ուղիղ, կոր գծեր: | Սկզբում կարելի է բռնել երեխայի ձեռքը, հետո թողնել, որ նա կատարի ինքնուրույն: |
| Ծանոթացնել հիմնական գույներին և կատարել որոշ գունային խաղեր: Սովորեցնել «կարդալ» սև, սպիտակ և գունավոր պատկերները (տերևներ, ծաղիկներ, հատապտուղներ): Չետազոտել խաղալիքները և հարաբերակցել դրանք իրենց պատկերների հետ (բահ, աստիճան, դանակ, պատառաքաղ, ափսե և այլն): | Գույները սովորեցնելիս սկզբում օգտագործել վառ գունավորմամբ քարտեր (երկու, երեք գույն): |
| Սովորեցնել նկարել պարզ առարկայական նկարներ(տուն, մարդ, արև, ծառ և այլն): | Նկարել օգտվելով օրինակից, կիրառել պաստելներ և գունավոր մատիտներ: |

**Տեսողական ընկալման զարգացումը
«Տեխնոլոգիայի» դասերին**

| Բովանդակություն | Մեթոդական ցուցումներ |
|--|--|
| Սովորեցնել աշխատել մկրատով: | Սկզբում երեխայի հետ միասին կտրել նեղ և լայն շերտեր, երկրաչափական պատկերներ: |
| Ծանոթացնել ապլիկացիային, կատարել ապլիկացիաներ պատրաստի մասերից (օրինակ երկրաչափական պատկերներ, ծաղիկներով ծաղկաման): | Ապլիկացիայի ժամանակ օգտագործել վառ, գունավոր թղթեր, ինչը ավելի հետաքրքիր է դարձնում աշխատանքը: |
| Ստեղծել սյուժետային ապլիկացիաներ: | |
| Աշխատել նախշակադապարով: Տեղադրել դետալները ըստ ձևանմուշի և նախշակադապարի համաձայն: | Սկզբում կիրառել մեծ նախշակադապարներ: |
| Աշխատել ծեփոնով (պլաստիլինով): | Ցանկալի է, որ պլաստիլինը լինի փափուկ ու գունավոր: |

Առաջին փուլի վերջում երեխան պետք է՝

գիտենա.

- հարթ և ծավալուն երկրաչափական մարմինները և տարբերակի տեսողությամբ (քառակուսի, եռանկյուն, շրջան, ծվածիր, գլան),
- բույսերի և կենդանիների խմբերը ծառեր, թփեր, խոտեր,
- հիմնական գույները,
- վերև, ներքև, հեռու, մոտիկ հասկացությունները,

կարողանա.

- տեղադրել առարկաները հարթության վրա միմյանց հանդեպ դիրքերին համապատասխան,
- համեմատել առարկաներն ըստ մեծության, չափի, երկարության, լայնության,
- աշխատել նախշակադապարով, ծեփոնով,
- աշխատել քանոնով, մկրատով,
- գծել ուղիղ, կոր գծեր:

**Տեսողական ընկալման զարգացման օրինակելի
ուսումնական նյութ**

II փուլ

Այս փուլի օրինակելի ուսումնական նյութն իր մեջ ներառում է հետևյալ առարկաները՝ «Մաթեմատիկա», «Ծանոթություն շրջակա միջավայրին», «Կերպարվեստ», «Տեխնոլոգիա»:

Տեսողական ընկալման զարգացումը «Մաթեմատիկայի» դասերին

| Բովանդակություն | Մեթոդական ցուցումներ |
|---|---|
| Ամրապնդել ուղղանկյուն, քառակուսի երկրաչափական պատկերների ճանաչումը: Սովորեցնել շրջանը (քառակուսի) բաժանել հավասար մասերի (2, 4, 6): | Գծել ուղղանկյուն, քառակուսի օգտագործելով քանոն: |
| Ամրապնդել ծավալուն երկրաչափական մարմինների՝ խորանարդ, գունդ, գլան, կոն, իմացությունը: Կառուցել հատված՝ քանոնի օգնությամբ: Սովորեցնել չափել հատվածը քանոնի օգնությամբ: | Կարելի է սկզբում օգտագործել թղթից պատրաստված քառակուսի, և այն ծալելով բաժանել հավասար մասերի: |
| Սովորեցնել համեմատել քառակուսի, ուղղանկյուն, եռանկյուն, կլոր ձևերի առարկաները՝ ադյուսակում պատկերված իրենց պատկերների հետ: Սովորեցնել մեկ երկրաչափական մարմնից ստանալ մեկ այլ երկրաչափական մարմին: | Սկզբում համեմատել առարկաներ ըստ ձևերի, այնուհետև դրանք համեմատել նկարված պատկերների հետ: |
| Տալ թվի գաղափարը, սովորեցնել հաշվել առարկաները, պատկերները դրանք զուգակցելով համապատասխան թվի նշանի հետ: | Սկզբում հաշվում է ուսուցիչը, այնուհետև երեխայի հետ միասին: |
| Սովորեցնել տեսողականորեն տարբերակել 1–10 թվերը, թվանշանները: Սովորեցնել տարբերակել «+», «-» նշանները և կատարել համապատասխան գործողություններ: | Թվանշաններով կատարել խաղային վարժություններ: |

**Տեսողական ընկալման զարգացումը
«Ծանոթացում շրջակա միջավայրին» դասերին**

| Բովանդակություն | Մեթոդական ցուցումներ |
|--|--|
| Ծանոթացնել հիգիենայի պարագաներին և սովորեցնել դրականոնները (օգտվել օճառից, սրբիչից և այլն): Սովորեցնել ճանաչել սպասքը և դրանց գործառույթները: | Սկզբում մանրամասն նկարագրել յուրաքանչյուր առարկայի արտաքին տեսքը, գործառույթները, ապա ցույց տալ դրանք գործնականորեն: |
| Սովորեցնել ճանաչել նկարներում պատկերված բնության կենդանի և անկենդան առարկաները, որոնք տրված են տարբեր դիրքերով (դիմային, պրոֆիլ, կիսապրոֆիլ): | Դժվարանալիս կարելի է սկզբում օգտագործել այդ նկարներում պատկերված առարկաները, ապա դրանք համադրել նկարների հետ: Խոսքով բացատրել այն կանոնները, որոնք անհրաժեշտ են կողմնորոշվելիս, ցույց տալ քարտեզներից տեսողությամբ օգտվելու հմտությունները: |
| Սովորեցնել անծանոթ միջավայրում տեսողությամբ կողմնորոշվելու որոշ կանոններ: | |

Տեսողական ընկալման զարգացումը «Կերպարվեստի» դասերին

| Բովանդակություն | Մեթոդական ցուցումներ |
|--|--|
| Տալ տեղեկություններ առարկայի ուրվագծի մասին: Գծել պատկերն ըստ ուրվագծի, գտնել առարկաների համապատասխան ուրվագծային պատկերները: | Սկզբում կարելի է ընդգծել առարկաների ուրվագծերն ըստ կետագծերի: Սկզբում կարելի է ցույց տալ պատկերը, այնուհետև այն դնել համապատասխան ուրվագծի մեջ: |
| Ծանոթացնել նախշին, առանձնացնել մասերը, որոնցից բաղկացած են նախշերը գծեր, քառակուսիներ, եռանկյուններ, ծաղիկներ: Սովորեցնել նկարել, ներկել գունավոր մատիտներով վերահսկելով տեսողությամբ: Սովորեցնել նկարել նախշակաղապարով: | Կարելի նախապես նախշերի բաղկացուցիչ մասերը նկարել տարբեր գույնի մատիտներով, որպեսզի ավելի տեսանելի լինի: |

**Տեսողական ընկալման զարգացումը
«Տեխնոլոգիայի» դասերին**

| Բովանդակություն | Մեթոդական ցուցումներ |
|--|---|
| Ծանոթացնել թղթի տեսակներին (գունավոր, սովաբաթուղթ, փայլաթիթեղ և այլն): Այդ թղթերից պատրաստել առարկաներ (նավակ, ինքնաթիռ, ծաղիկ և այլն): | Սկզբում երեխաների հետ միասին աշխատել, այնուհետև թողնել, որ նրանք կատարեն ինքնուրույն: |
| Սովորեցնել կատարել սյուժետային ապլիկացիաներ: Ծանոթացնել թելին և կտորին: Բացատրել թելերի տարբերությունները և նշանակությունները: | Կարելի է թելերից պատրաստել պարաններ, որոնք լինեն տարբեր գույների, երկարության և այլն: |
| Կտորի վրա նշել առարկայի ուրվագիծ, այնուհետև կտրել այն: | |

Երկրորդ փուլի վերջում երեխան պետք է՝

գիտենա.

- թղթի տեսակները (գունավոր, սովաբաթուղթ և այլն, դրանց օգտագործման ձևերը),
- 1–10 թվանշանները,
- հիգիենայի պարագաները և դրանց օգտագործման գործառույթները,
- ապլիկացիայի կատարման եղանակները:

կարողանա.

- գծել հատված քանոնի օգնությամբ,
- տարբերել շրջանը, խորանարդը, գլանը, կոնը միմյանցից և հարթ երկրաչափական մարմիններից,
- տարբերել կենդանի և անկենդան բնությունը դեկորատիվ և այլ բույսերը, ընտանի, վայրի կենդանիները,
- «կարդալ» ուսումնական պատկերազարդումները,
- բնօրինակից նկարել հարթ առարկաները,
- աշխատել գունավոր մատիտներով և կավիճներով,
- պատրաստել սյուժետային ապլիկացիաներ գունավոր թղթերից,
- ձևամուշի օգնությամբ գծել և ընդգծել դետալները:

**Տեսողական ընկալման զարգացման
օրինակելի ուսումնական նյութ**

III փուլ

Տեսողական ընկալման զարգացման երրորդ փուլի օրինակելի ուսումնական նյութն իր մեջ ներառում է հետևյալ առարկաները՝ «Մաթեմատիկա», «Բնություն», «Կերպարվեստ», «Տեխնոլոգիա»:

**Տեսողական ընկալման զարգացումը
«Մաթեմատիկայի» դասերին**

| Բովանդակություն | Մեթոդական ցուցումներ |
|--|---|
| Սովորել երկնիչ, եռանիչ թվերի կազմությունը, դրանց պատկերումը: Սովորեցնել գտնել և համեմատել առարկաների պատկերները միևնույն առարկաների ուրվագծերի, սև ու սպիտակը գունավոր պատկերների հետ: | Չեռնել, որ երեխաները չչփոթեն նման թվերը, օրինակ 11 և 111: |
| Սովորեցնել առանձնացնել տրված նկարի մեջ երկրաչափական պատկերները (օրինակ, տունը քառակուսուց և եռանկյունուց, սունկը կիսաշրջանից և օվալից): Սովորեցնել լրացնել առարկայական պատկերների կիսատ ուրվագիծը: | Սկզբում ուսուցչուհու օգնությամբ վերլուծել նկարները, այնուհետև առանձին երկրաչափական պատկերներից կազմել առարկաների նկարներ: |
| Սովորեցնել տարբերակել «<», «>» նշանները: Սովորեցնել բեկյալ հասկացությունը, գծել բեկյալներ: | Նշանները կիրառել օգտագործելով առարկաների խմբերը՝ դրանք համեմատելով միմյանց հետ: |

**Տեսողական ընկալման զարգացումը
«Բնության» դասերին**

| Բովանդակություն | Մեթոդական ցուցումներ |
|---|---|
| Կազմակերպել էքսկուրսիա գրոսայգում, ամրապնդել «դեկորատիվ բույսեր», «ծաղիկներ», «անտառի բնակիչներ» հասկացությունները: | Կարելի է կիրառել ընդհանրացնող հասկացություններին վերաբերող լոտո խաղը: |
| Սովորեցնել առանձնացնել այդ ընդհանրացնող հասկացությունների մեջ մտնող պատկերները: | Սովորեցնել բնության պահպանման կանոններ, սեր, կարգապահություն: |
| Ձևավորել տեսողական պատկերներ «Իմ քաղաքը», «Բնություն», «Եղանակ» և այլ թեմաներով: Խաղալ սյուժետադերային խաղեր «Նոր բնակարան», «Ծննդյան օր», «Ես օգնում եմ մայրիկիս» թեմաներով: | Ցանկալի է նախօրոք պատրաստել խաղում կիրառվող նյութերը և առարկաները: |

**Տեսողական ընկալման զարգացումը
«Կերպարվեստի» դասերին**

| Բովանդակություն | Մեթոդական ցուցումներ |
|--|---|
| Սովորեցնել համեմատել բնական ծավալուն առարկաները և դրանց պատկերները: | |
| Սովորեցնել օգտվել վրձնից, ջրաներկից: Նկարել սյուժետային նկարներ: | Չետաքրքրություն առաջացնելու նպատակով սկզբում թողնել, որ երեխան ջրաներկով նկարի գունախաղեր ազատ թեմայով: |
| Սովորեցնել նկարել առարկաների բնօրինակներից պահպանելով չափային հարաբերությունը: Սովորեցնել կատարել զարդանկարներ ըստ օրինակի, ուղիղ գծերից, երկրաչափական մարմիններից, տերևներից, ծաղիկներից, որոնք տեղադրված են շրջանում, քառակուսու կամ ուղղանկյան մեջ: | Բանավոր վերլուծել առարկայի բաղկացուցիչ մասերը և նմանեցնել երկրաչափական պատկերներին: |

**Տեսողական ընկալման զարգացումը
«Տեխնոլոգիայի» դասերին**

| Բովանդակություն | Մեթոդական ցուցումներ |
|---|--|
| Սովորեցնել աշխատել սովորաբարձրով: Սովորեցնել աշխատել կոնստրուկտորով, հավաքել առարկա, օրինակ մեքենան ըստ նկարի: Կառուցողական գործունեություն. սովորել խորանարդներով, լուցկիներով և այլ առարկաներով կառուցել ըստ օրինակի և առանց դրա առկայության: | Ցանկալի է յուրաքանչյուր գործունեություն իրականացնելիս օգտագործել խոսքային նկարագրություն և անպայման ուշադրություն դարձնել տեսողական ընկալմանը: |

Երրորդ փուլի վերջում երեխան պետք է՝

գիտենա.

- ընդհանուր հասկացությունները և առանձնացնի այդ հասկացությունների մեջ մտնող պատկերները,
- դերային խաղերի կանոնները,
- «<», «>» նշանները,

կարողանա.

- լրացնել կիսատ ուրվագիծը,
 - գտնել երկրաչափական մարմինները առարկայական նկարներում,
 - բնօրինակից նկարել հարթ առարկաները՝ քառակուսի, ուղղանկյուն, կլոր ձևերով,
 - կատարել զարդանկարներ,
 - աշխատել մկրատով և կատարել ապլիկացիաներ:
- Մենք ենթադրում ենք, որ սույն օրինակելի ծրագրի կիրառումը կնպաստի թույլ տեսող երեխաների տեսողական ընկալման հնարավորությունների ընդլայնմանը: Նրանք կկարողանան ճիշտ և արագ որոշել առարկաների ձևերը, գույները, չափերը, տեղադրությունը, կառուցվածքը և այլն:

ԹՈՒՅԼ ՏԵՍՆՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՏԵՍՈՂԱԿԱՆ ԸՆԿԱԼՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՈՐՈՇՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԹԵՍՏԵՐ


Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թույլ տեսող երեխաները դժվարանում են տեսողությամբ ընկալել գործնականում հաճախ հանդիպող առարկաները, երևույթները, գույները (կարմիր, դեղին, կանաչ, կապույտ), թվերը (0–9), երկրաչափական պատկերները (չրջան, եռանկյուն, քառակուսի, ուղղանկյուն) և այլն, մենք ընտրել, մշակել և համակարգել ենք տեսողական ընկալման զարգացման մակարդակի որոշման օրինակելի թեստեր՝ հաշվի առնելով հատուկ գրականությունում եղած մոտեցումները (Լ. Տիխոմիրովա, 2000, Օ. Ն. Չենցովա, 2005): Ուսուցիչները, դաստիարակները և ծնողները, կիրառելով օրինակելի թեստերը, հետագայում փոխելով, ընդլայնելով, հնարավորություն կունենան պարբերաբար ստուգել երեխաների տեսողական ընկալման զարգացման մակարդակը:

Ներքոնշյալ թեստերը մենք կիրառել ենք գործնականում և ստացել դրական արդյունք:


Թեստ 1. Որոշել համապատասխան թվի կրկնման քանակը հարյուր վանդականոց աղյուսակում:

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | 3 | 2 | 8 | 2 | 3 | 6 | 5 | 9 | 1 |
| 7 | 5 | 7 | 6 | 6 | 5 | 9 | 0 | 8 | 5 |
| 3 | 1 | 0 | 1 | 3 | 4 | 0 | 6 | 5 | 1 |
| 7 | 2 | 4 | 1 | 0 | 6 | 2 | 3 | 7 | 1 |
| 6 | 0 | 2 | 5 | 4 | 7 | 8 | 3 | 1 | 3 |
| 8 | 0 | 3 | 2 | 1 | 5 | 2 | 3 | 9 | 5 |
| 1 | 6 | 4 | 3 | 2 | 5 | 9 | 0 | 8 | 7 |
| 6 | 7 | 1 | 6 | 9 | 8 | 0 | 3 | 2 | 4 |
| 7 | 1 | 4 | 7 | 5 | 3 | 9 | 2 | 3 | 4 |
| 6 | 3 | 0 | 7 | 6 | 9 | 1 | 0 | 9 | 1 |

Թեստ 2. Որոշել համապատասխան երկրաչափական պատկերի կրկնման քանակը հարյուր վանդականոց աղյուսակում:



Թեստ 3. Որոշել համապատասխան գույնի կրկնման քանակը հարյուր վանդականոց աղյուսակում.



ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՈՎ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՏԵՍՈՂԱԿԱՆ ԸՆԿԱԼՄԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԽԱՂԵՐ, ԽԱՂԱՅԻՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստորև ներկայացված խաղերը և խաղային վարժությունները կնպաստեն տեսողական ընկալման զարգացման օրինակելի ծրագրի ուսումնական նյութի ամրապնդմանը: Դրանք կարելի է կիրառել ինչպես ուսումնական առարկաների, այնպես էլ ազատ ժամանակ ու դասապատրաստման ընթացքում:

- Առաջարկված խաղերը տրված են հետևյալ կառուցվածքով
- նպատակ,
 - անհրաժեշտ պարագաներ,
 - խաղի ընթացք:

«Ժապավենի հետևից»

- Նպատակը** – Ջարգացնել գունային ընկալումը:
Անհրաժեշտ պարագաներ – Տարբեր գույնի ժապավեններ, երիզներ (կարմիր, կանաչ, մանուշակագույն) 40–50 սանտիմետր երկարությամբ:
Ընթացքը – Երեխայի ուշադրությունը կենտրոնացնել ժապավենի վրա՝ մոտեցնելով այն 20–30 սանտիմետր հեռավորությամբ և հեռացնել ըստ պարզած ձեռքի երկարության: Համոզվել, որ երեխայի մեջ ամրակայվել է գույնը: Խնդրել, որ երեխան անվանի այն:
Մեթոդական ցուցումներ – Եթե երեխան դժվարանում է, կարելի է խնդրել, որ բռնի երիզի մյուս ծայրից, այնուհետև այդ երիզով պատրաստել ծաղիկ, թիթեռ և այլն:

«Գունային խառնաշփոթ»

- Նպատակը** – Ջարգացնել գունային ընկալումը, բառապաշարը, ուշադրությունը:
Անհրաժեշտ պարագաներ – Ուղղանկյուն, գունավոր քարտեր (կարմիր, դեղին, կանաչ, կապույտ, շագանակագույն): Համապատասխան գույներով առարկայական նկարներ:

Ընթացքը – Քարտերը դասավորում ենք սեղանի վրա: Բոլոր առարկայական նկարների թղթերը լցնում ենք սեղանին այնպես, որ նկարները չերևան: Երեխային խնդրում ենք հերթով վերցնել նկարը, անվանել և դնել քարտի վրա՝ ըստ գույնի:

«Կազմիր տնակ»

Նպատակը – Ձարգացնել գունային ընկալումը, բառապաշարը, ուշադրությունը:

Անհրաժեշտ պարագաները – Գունավոր քարտեր տարբեր գույների:

Ընթացքը – Սեղանին դնում ենք տարբեր գույների և չափերի երկրաչափական պատկերներ: Խնդրում ենք երեխային կազմել տնակ, ընտրելով, օրինակ քառակուսին և կարմիր մեծ եռանկյունը: Այս առաջարկը հարկավոր է կատարել մյուս գույնի եռանկյուններով և քառակուսիներով նույնպես (ըստ չափերի):

Մեթոդական ցուցումներ – Խաղը հեշտացնելու նպատակով կարելի է սկզբից սեղանին դնել միայն մեկ գույնի տարբեր չափերի երկրաչափական պատկերներ, այնուհետև աստիճանաբար ավելացնելով գույների քանակը և այլն:

«Գույնզգույն ծով»

Նպատակը – Ձարգացնել թվերի, գույների ընկալումը:

Անհրաժեշտ պարագաները – A4 չափի թղթի վրա նկարված է ծով: Այն բաժանված է տարբեր մասերի, որոնք համարակալված են կրկնվող թվերով:

Ընթացքը – Երեխայի առջև դնում ենք ծովի նկարը, խնդրում գտնել միևնույն թվերով բաժանված հատվածները և ներկել դրանք միևնույն գույնով:

«Գտիր բանալին»

Նպատակը – Սովորեցնել տեսողությամբ ըստ օրինակի ընտրել համապատասխան ձևը և երկրաչափական պատկերը:

Անհրաժեշտ պարագաները – Սովորաթղթեր՝ երեխաների թվով: Յուրաքանչյուրի վրա պատկերված են երկու տարբեր չափերի տնակներ (մեկի դռան վրա նկարված է շուն քառակուսին բերանում, մյուս-

սի դռան վրա արջուկ եռանկյունը բերանում և այլն), կենդանիների նախշակաղապարներ, մանր երկրաչափական ձևեր:

Ընթացքը – Երեխայի առջև դնում ենք տան պատկերով քարտը, երկու կենդանիների նախշակաղապարները և երկրաչափական պատկերները: Երեխան պետք է նայի կենդանիներին, անվանի դրանք և գուշակի, թե որ տանն են նրանք բնակվում: Ուսուցիչը ցույց է տալիս, օրինակ արջուկին, և խնդրում բացել նրա տան դուռը համապատասխան բանալիով (երկրաչափական պատկեր):

«Թաքցրու գունդը ափիդ մեջ»

Նպատակը – Սովորեցնել և զարգացնել չափի, մեծության տեսողական ընկալումը:

Անհրաժեշտ պարագաները – Նույն գույնի, երկու տարբեր չափերի գնդեր (մեծ, փոքր):

Ընթացքը – Ուսուցիչը սեղանին դնում է մեծ և փոքր գնդերը, ցույց է տալիս, թե ինչպես պետք է թաքցնել գունդը ձեռքի մեջ: Երբ երեխան վերցնում է մեծ գունդը, ապա այն չի կարողանում թաքցնել:

«Բռնիր ձկները»

Նպատակը – Չափի տեսողական ընկալման, տարածական կողմնորոշման զարգացում:

Անհրաժեշտ պարագաները – Տարբեր չափերի օղակներ, խաղալիք ձկներ:

Ընթացքը – Երեխաները կանգնում են երկու շարքով: Նրանցից 3 մետր հեռավորությամբ՝ գետնին դրված են տարբեր չափերի ձկներ: Երեխաների ձեռքին տարբեր չափերի օղակներ են: Նրանք պետք է վազելով գնան և դրանք դնեն համապատասխան չափի ձկան վրա, ապա հետ վերադառնան, խփեն հաջորդ մասնակցի ձեռքին, որը շարունակելու է խաղը: Խաղում է այն խումբը, որը ճիշտ և շուտ է ավարտում խաղը:

«Բերքահավաք»

Նպատակը – Տեսողական ընկալման և տարածական կողմնորոշման զարգացում:

Անհրաժեշտ պարագաները – Թղթից պատրաստված մեծ ծառ, որի վրա ամրացված են խնձորներ և գնդակ:

Ընթացքը – Մարզադահլիճում, պատի մոտ դրված է «խնձորի ծառը»: Երեխան 2 մետր հեռավորությունից գնդակով պետք է խփի խնձորին և գցի այն գետնին: Խաղի վերջում երեխան պետք է հավաքի խնձորները: **Մեթոդական ցուցումներ** – Այս խաղը կարելի է անցկացնել խմբով: Խաղի վերջում որոշվում է հաղթողը: Այն խումբն է հաղթում, որը շատ խնձորներ է հավաքում:

«Քանդիր աշտարակը»

Նպատակը – Տեսողական ընկալման, տարածական կողմնորոշման զարգացում:

Անհրաժեշտ գույքը – Թղթ մեծ խորանարդներ, գնդակ:

Ընթացքը – Երեխան կառուցում է աշտարակ մեկ խորոնարդը մյուսի վրա դնելով: Այնուհետև վերցնում է գնդակը և 3 մետր հեռավորությունից հարվածում աշտարակին, որպեսզի քանդի:

«Ժամացույց»

Նպատակը – Չարգացնել թվերի տեսողական ընկալումը և տարածական ընկալումը:

Անհրաժեշտ գույքը – Ստվարաթղթից պատրաստված մեծ ժամացույց, որի վրայի թվերը 10 սանտիմետր մեծություն ունեն, գնդակ:


Ընթացքը – Դահլիճի պատին կախում ենք ժամացույցը: Ուսուցիչը բարձրածայն ասում է «Ժամը քանի՞սն է» (օգտագործել միայն կլոր ժամեր): Երեխան 3 մետրից գնդակով խփում է համապատասխան թվին:

ԽԱՂԱՅԻՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առարկաների ձևերի և մեծության տեսողական ընկալման զարգացման վարժություններ

Առաջադրանք 1


- Առարկայի յուրաքանչյուր պատկերի տակ տեղադրել համապատասխան ձևի երկրաչափական մարմինը:
 - Անվանել առարկայական նկարները և որոշել դրանց հերթական տեղը շարքում:
- Օրինակ՝



Առաջադրանք 2


- Անվանել երկրաչափական պատկերները և առարկայական նկարները:
- Գծերով միացնել երկրաչափական պատկերները իր ձևով համապատասխանող առարկայական նկարների հետ:

Օրինակ




Առաջադրանք 3

- Անվանել երկրաչափական մարմինները:
 - Գծերով միացնել ձևով նման երկրաչափական պատկերները:
- Օրինակ



Առաջադրանք 4


- Միանման երկրաչափական պատկերները դասավորել մեծից փոքր հաջորդականությամբ:
- Օրինակ



Առարկաների չափումների և տեսողական ընկալման զարգացմանը նպաստող վարժություններ


Առաջադրանք 1

- Քառակուսիների բաժանված թղթի վրա անկյուններում դնել երեք կետ:
 - Միացնել կետերը գծերով:
 - Նույն ձևով կետերով գծել հինգանկյուն և ընդգծել:
- Օրինակ




Առաջադրանք 2

- Սկսելով վերևի տողից՝ նկարել շրջաններ, յուրաքանչյուր հաջորդ տողում ավելացնելով մեկական շրջան:
- Ստուգել կատարած հանձնարարությունը շրջանները հաշվելով բարձրաձայն:
Օրինակ




Առաջադրանք 3

- Առաջին տողի վրա նկարել մեկ ուղղանկյուն և չորս քառակուսի, երկրորդ տողի վրա՝ երկու շրջան և երեք եռանկյուն, երրորդին՝ երեք քառակուսի և երկու ուղղանկյուն, չորրորդ տողում՝ չորս ձվաձիգ և մեկ քառակուսի:
Օրինակ




Առաջադրանք 4

- Գծել տարբեր երկրաչափական մարմինների մեջ հավասար քանակով շրջաններ:
Օրինակ




Առաջադրանք 5

- Վերևի տողում նախշակադապարով ընդգծել երեք տոնածառ:
- Ներքևի տողում նախշակադապարով ընդգծել եղևնիներից մեկով ավել նապաստակ:
Օրինակ



Առաջադրանք 6

- Նախշակադապարով ընդգծել տասը պատկեր, որոնցից առաջին երկուսը կանաչ, երրորդն ու չորրորդը սև, և այլն:
 - Առաջին և երկրորդ մարմինները ներկել այնպես, որ ստացվի տանձ, երրորդն ու չորրորդը բզեզ, և այլն:
- Օրինակ



ԹՈՒՅԼ ՏԵՍՆՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՏԵՍՈՂԱԿԱՆ ԸՆԿԱՆՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արձանագրություն 1

| Տեսողական արտաբյուրն | Ցուցանիշներ | | |
|----------------------|-----------------|----------------------|--------------------------------|
| | Լեռում ապրողներ | Լեռում գնդակի բանում | Գնդակի բաց թողում խողովակի մեջ |
| Չկա | խոտիչ | խոտ | խոտիչ ցնկոխողովակ խոտիչ |
| | նր | բզեզիչ | խոտիչ ցնկոխողովակ խոտ |
| Մասրայում | | բզեզիչ Կանոն | նման խոտիչն առ ցնկոխողովակ խոտ |
| | | | նր ցնկոխողովակ մեջ |
| Տարր | | | |
| | | | |
| Ազգանուն անուն | | | |
| | | | |
| N | 1 | 2 | N |

Միժամագրություն 2

| N | Ազգանուն անուն | Ճանաչում | Ծնունդ | Բնակավայր | Տեսություն | | |
|---|----------------|----------|--------|-----------|------------|--------|------------|--------|------------|--------|------------|--------|------------|--------|------------|--------|------------|--------|--------|
| | | | | | Վերջին | Վերջին | Վերջին |
| 1 | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2 | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 3 | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 4 | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 5 | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 6 | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 7 | | | | | | | | | | | | | | | | | | | |

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Հայերեն

1. Ազարյան Ռ. Ն., Տեսողության խանգարումով երեխաների առողջության ամրապնդման և ֆիզիկական դաստիարակության մեթոդիկա, Ուսումնական ձեռնարկ մանկավարժական բուհերի ուսանողների համար, Երևան, 2008, 119 էջ:
2. Ազարյան Ռ. Ն., Սարգսյան Չ. Վ., Ինչպես պահպանել և լավացնել տեսողությունը, Երևան, 1994, 55 էջ:
3. Բոդյան Վ., Հայկական ժողովրդական խաղեր, Երևան, Աշխատասիրություն, 1983, 262 էջ:
4. Գալստյան Բ. Հ., Խաղերի կիրառման հիմնախնդիրը հատուկ, օժանդակ դպրոցում: «Հատուկ մանկավարժություն և հոգեբանություն» գիտամեթոդական հոդ. ժող., Երևան, 2006, էջ 4-10:
5. Դարբինյան Ա. Վ., Խաղը որպես բերգարգացած երեխաների փոխօգնության ձևավորման միջոց, «Հատուկ մանկավարժություն և հոգեբանություն» գիտամեթոդական հոդ. ժող., Երևան, 2002, N1, էջ 36-38:
6. Մամիկոնյան Մ. Ս., Սպորտային խաղեր, Ուսումնական ձեռնարկ, Երևան, 1970, 169 էջ:
7. Մարության Մ. Կ., 1-4-րդ դասարանների տեսողության խանգարումով երեխաների տեսողական ընկալման զարգացման օրինակելի ծրագրի բովանդակությունը, «Հատուկ մանկավարժություն և հոգեբանություն» գիտամեթոդական հոդ. ժող., Երևան, 2006, N5, էջ 56-62:
8. Մարության Մ. Կ., Թույլ տեսող երեխաների տեսողական ընկալման հետազոտման մեթոդիկա, Երևան, «Մանկավարժական միտք», 2006, N 1-2, էջ 181-189:
9. Մարության Մ. Կ., Թույլ տեսող երեխաների տեսողական ընկալման զարգացման ուղղված հարցերին ուսուցիչների իրազեկության սոցիալական հետազոտություն, «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2007, N 1(30) 247-250 էջ:
10. Մարության Մ. Կ., Թույլ տեսող երեխաների տեսողական ընկալման զարգացման ժամանակակից մոտեցումները «Հատուկ մանկավարժություն և հոգեբանություն» գիտամեթոդական հոդ. ժող., Երևան, 2008, N7, էջ 28-33:
11. Սահակյան Գ. Ռ., Սաթեմատիկայի ուսուցման գործընթացի առանձնահատկությունները տեսողության խանգարում ունեցող երեխաների հատուկ կրթությունները տեսողության խանգարում ունեցող երեխաների հատուկ դպրոցում, «Հատուկ մանկավարժություն և հոգեբանություն» գիտամեթոդական հոդ. ժող., Երևան, 2007, N6, էջ 93-101:

12. Аветисов Э. С. Охрана зрения у детей. — М.: Медицина, 1975. — 272 с.
13. Азарян А. Р. Формирование правильной ходьбы у детей с нарушениями зрения: Дисс. канд. пед. наук. Ереван, 2004, с. 10–25, 77–92.
14. Азарян Р. Н. Проблемы специального образования детей с ограниченными возможностями развития в Армении. / Педагогическая мысль. /. — Ереван, 2003 №3–4 с 131–135.
15. Александрян Э. А. Значение подвижных игр с правилами для воспитания волевых качеств характера детей дошкольного возраста: Автореф. дис. канд. пед. наук. — М., 1956 — 15 с.
16. Арутюнян Г. А. Особенности организации коррекционно—развивающей работы со слепыми и слабовидящими детьми, имеющие сложные формы нарушения развития; // Специальная педагогика и психология, сборник научно—методических статей, Ереван, 2003 с. 59–62.
17. Былеева Л. В., Коротков В. М., Яковлев В. Г. Подвижные игры. — 4—е изд., перераб. и доп. — М.; Фис. — 1974. — 207 с.
18. Головина Т. П. О некоторых особенностях узнавания объектов слабовидящими школьниками // Специальная школа. 1958. Вып. 4, с. 32–54.
19. Гнеушева А. Н. Охрана зрения слабовидящих школьников: Пособие для учителей. — М.: Просвещение, 1982, — 252 с.
20. Гнеушева А. Н. Влияние зрительной нагрузки на функциональное состояние органа зрения слабовидящих школьников. У науч. сесия по дефектологии. АПН РСФСР, М., 1967, с. 58–68.
21. Григорьева Л. П., Сташевский С. В. Основные методы развития зрительного восприятия у детей с нарушением зрения. — М., Педагогика. — 1990. — 58 с.
22. Гуровец Г. В., Ленюк Я. Я. Коррекционно—развивающие игры как метод обучения в специальной педагогике // Дефектология. — 1996. — № 2 — с. 77–83.
23. Денискина В. З. Содержание работы воспитателя с учащимися начальных классов школ для детей с нарушением зрения. — Верхняя Пышма, 1997. — с. 45–70.
24. Земцова М. И. Учителю о детях с нарушением зрения — М.; Просвещение, 1973 — 159 с.
25. Земцова М. И. Особенности познавательной деятельности слепых / Психологическая наука в СССР. — М Просвещение, 1960, с. 43–55.
26. Земцова М. И. Роль зрительного опыта в познавательной деятельности ослабленных // Восстановление трудоспособности и приспособление к труду инвалидов: Сб. 3, ЦИЭТИН. М., 1949, с. 54–60.
27. Каплан А. И., Офтальмологический аспект проблемы дифференцированно—го подхода к обучению детей с нарушениями зрения // Дефектология. — 1973. — №6. — с 8–13.

28. Коррекционно—воспитательное значение подвижных игр в развитии зрения и движения детей с амблиопией и косоглазием // В мет. пособии// Под ред. Л. И. Плаксиной, Л. А. Григорян. — М., 1998. — с. 51–55.
29. Коррекционная работа с учащимися начальных классов школ для слепых детей, / Под ред. Л. И. Солищевой, М.; "Логос" ВОС, 1990, с. 129.
30. Кулагин Ю. А. Слабовидящие дети. Изд. Просвещение. — Л., 1967. — 15 с.
31. Лейкина М. В. Подвижные игры. — М., Физкультура и спорт, 1965 — 56 с.
32. Литвак А. Г. Соотношение компенсации и коррекции в развитии слепых и слабовидящих // Особенности познавательной деятельности слепых и слабовидящих. — Л., 1976, с. 46–66.
33. Маллаев Д. М. Игры для слепых и слабовидящих. — М., Вос, 1997. — 85 с.
34. Маллаев Д. М. Педагогические основы формирования игры слепых и слабовидящих детей, как средство коррекции их нравственного и физического развития: Автореф. Дис. докт. пед. наук. — М., 1995. 48 с.
35. Марутян М. К. Игры в системе развития зрительного восприятия у детей с нарушением зрения // Специальная педагогика и психология, сборник научно—методических статей, Ереван, 2005, с. 159–162.
36. Моргулис И. С. Теоретические основы коррекционно—воспитательного процесса в младших классах школы слепых: Автореф. дис. канд. пед. наук. — М., 1984. — 31 с.
37. Мкртчян А. Р., Азарян Р. Н. Об оптимизации зрительной работы слепых и слабовидящих учащихся // Перспективы развития специального образования / Сборник науч. трудов; Нижний Новгород., 2002, с 88–91.
38. Муратов Р. С. Технические средства обучения слепых и слабовидящих школьников. — М., Просвещение, 1968. — 219 с.
39. Плаксина Л. И. Развитие зрительного восприятия // В сб. Программы специальных образовательных учреждений IV вида М.; Просвещение, 2005, с. 56–66.
40. Плаксина Л. И. Развитие зрительного восприятия у детей с нарушениями зрения в процессе обучения математике. — Калуга; Изд. "Адель", 1980. 118 с.
41. Плаксина Л. И. Как учить слабовидящего ребенка видеть и понимать окружающий мир // Воспитание слабовидящего ребенка в семье. М., 1986, с. 45–48.
42. Самбикин Л. Б. Игры для слепых детей. 3—е изд. — М.; ВОС. 1979. — 232 с.
43. Сермеев Б. В. Методика воспитания двигательных качеств у аномальных детей. Горький, 1976, с. 40.
44. Солнцева Л. И. Особенности игровой деятельности слепых детей дошкольного возраста. // Дефектология. — 1974. — №6 — с. 66–73.
45. Стернина Э. М. Роль творческой игры и воспитание слепых и слабовидящих школьников // Дефектология. — 1976. — №5 с. 52–57.
46. Тимофеева Е. А. Подвижные игры с детьми младшего дошкольного возраста. — М.; Просвещение, 1979. — 96 с.